**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 94**

Ք. Երևան **« 12 » Հունվարի 2023 թ.**

Մի կողմից «Մանիլ» ՍՊԸ-ն /հետագայում կատարող/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա տնօրեն՝ **Մ.Մալխասյանի**, մյուս կողմից **«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ** /հետագայում պատվիրատու/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա գլխավոր տնօրեն՝ **Վ.Պետրոսյանի** կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի նպատակը**

Կատարողի կողմից ընդգրկված **ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ 50/12** հասցեի թվով 2 վերելակների (մոսկովյան արտադրության) տեխ. սպասարկման և անխափան շահագործման ապահովումը:

**2. Կողմերի պարտականությունները**

2.1 Ապահովել եռաֆազ հոսանքի անխափան սնուցումը մինչև մեքենայական սրահի գլխավոր անջատիչը:
2.2 Առանց կատարողի հետ համաձայնեցնելու, սեփական նախաձեռնությամբ, չմիջամտել և չկատարել վերելակներիի հետ առնչվող որևէ տեսակի աշխատանքներ:
2.3 Ապահովել վերելակների փորձաքննության իրականացումը սահմանված կարգով:
2.4 Վերելակների խափանման դեպքում կատարողին այդ մասին տեղյակ պահել /ներկայացնել հայտ/:

**3. Կատարողի պարտավորությունները**

3.1 Ապահովել վերելակների անխափան շահագործումը:
3.2 Իրականացնել վերելակների տեխ. սպասարկումը ըստ կանոնակարգի:
3.3 Վերելակների նորոգման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման հիման վրա:
3.4 Հերթապահների կողմից վերելակի խցիկից մարդկանց հանման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման պահից:
3.5 Սպասարկման պրոֆիլակտիկ և նորոգման աշխատանքները իրականացնել ժամը 9:00-մինչև 18:00-ն:Հանգստյան օրերը շաբաթ,կիրակի:
3.6 Իրականացնել վերելակներիի տեխ. սպասարկումը որակավորված էլ. մեխանիկներով:

**4. Վճարման կարգը**

4.1 Վերելակների տեխ. սպասարկման ամսավճարը կազմում է՝
**45000 ( քառասունհինգ հազար) դրամ,** ներառյալ հարկերը

4.2 Սպասարկման ամսական վարձի վճարումը կատարել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

**5. Հատուկ պայմաններ**

5.1 Վերելակների վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի միջոցներով:

## 6. Պայմանագրի կնքման պայմանները և ժամկետը

6.1 Պայմանագիրը կնքելու պահին նշված վերելակները պետք է գտնվեն շահագործման պիտանի վիճակում:
6.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է **01 Փետրվարի 2023թ. մինչև 31 Հունվարի 2024թ.**
6.3 Սույն պայմանագիրը կարող է չեղյալ համարվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ, նախօրոք` տեղյակ պահելով մյուս կողմին:
6.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և պահպանվում են կողմերի մոտ:
6.5 Սույն պայմանագրից ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

## 7. Կողմերի իրավաբանական հասցեները

| «ՄԱՆԻԼ» ՍՊԸ | «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ |
|---|---|
| Հասցե **Րաֆֆու 27 շենք** | Հասցե **Ծովակալ Իսակովի 50/12** |
| Հեռ **74-73-86** | Հեռ **(010) 74-21-30** |
| ՀԲԲ **Սեբաստիա մ/ճ 11500593206200** | ԲՀ **ՀԲԲ 11500682358300** |
| ՀՎՀՀ **01845706** | ՀՎՀՀ **01804548** |
| ՏՆՕՐԵՆ` Մ.ՄԱԼԽԱՍՅԱՆ | ԳԼԽ. ՏՆՕՐԵՆ` Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| Կ.Տ | Կ.Տ |